Հավելված 2
2026 թ. «հունվարի» «23»-ին կնքված
«1032-11002/2026-ԱԶԿՏ9» պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N_2_

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | 1032-11002/2026-ԱԶԿՏ9 |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2026-31.12.2026 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.04.2026-30.06.2026 |
| **Ներկայացման օր** | 06.07.2026 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Նաիրա Առաքելյան,<br>ՀԿ Նախագահ |

**2. Բովանդակային հաշվետվություն**
**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները. <br><br>• **Շահառուների կարիքների գնահատում**. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է նախկինում իրականացված կարիքների գնահատումների հիման վրա մշակված անհատական սոցիալական ծրագրերի իրականացումը: Սոցիալական աշխատողի գլխավորությամբ մասնագիտական թիմը պարբերաբար հետևել է շահառուների սոցիալական վիճակին, գնահատել ծրագրերի իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում կատարել ընթացիկ վերանայումներ՝ ապահովելով ծառայությունների համապատասխանությունը շահառուների առկա կարիքներին: <br><br>• **Անհատական սոցիալական ծրագրի մշակում.** Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական ծառայությունները շարունակվել են նախկինում կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում: Ծառայությունների տրամադրումն իրականացվել է գործող պայմանագրերի և անհատական սոցիալական ծրագրերի պահանջներին համապատասխան՝ ապահովելով ծառայությունների անընդհատությունն ու շահառուների իրավունքների պաշտպանությունը: Նոր պայմանագրերի կնքման անհրաժեշտություն հաշվետու ժամանակահատվածում չի առաջացել: <br><br>• **Ամենօրյա խնամքի ծառայությունների մատուցում**. Հաշվետու ժամանակահատվածում շահառուներին շարունակաբար մատուցվել են տնային խնամքի ծառայություններ՝ համաձայն անհատական սոցիալական ծրագրերի և ծառայությունների մատուցման հաստատված ժամանակացույցի: Շահառուների կարիքներին համապատասխան տրամադրվել են կենցաղային սպասարկման, բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև սոցիալական խորհրդատվության ծառայություններ՝ նպաստելով նրանց ինքնուրույն կենսագործունեության պահպանմանը, կյանքի որակի բարելավմանը և սոցիալական աջակցության շարունակական ապահովմանը: |

Սոցիալական աշխատողը վեց շահառուի համար աջակցել է սոցիալական նպաստի տարեկան փաստագրական գործընթացում՝ անհրաժեշտ փաստաթղթերն ու դիմումները ներկայացնելով Արմավիրի միասնական սոցիալական ծառայություն (ՄՍԾ) ՏԿ:

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողը ինը շահառուի համար ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը ՄՍԾ՝ եռամսյակային հրատապ օգնություն ստանալու նպատակով:

Սոցիալական աշխատողը կենցաղային աշխատողների հետ միասին ծրագրում ընդգրկված երեք տարեցների համար, ովքեր չունեին անկանխիկ թոշակի ստացման քարտ, իրականացրել են համապատասխան կազմակերպչական աշխատանքներ: Շահառուի համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել է Արմավիրի ՄՍԾ, ապահովվել է գործընթացի համակարգված կազմակերպումը, կազմակերպվել և իրանացվել է նրանց ուղեկցումը բանկ՝ քարտերի ձևակերպման նպատակով:

Երկու տարեց անձի համար սոցիալական աշխատողը աջակցել է նոր անձնագրի ստացման գործընթացում, իսկ երեք տարեց անձի՝ կենսաթոշակային քարտերի փոփոխման բանկային գործընթացներում:

Հաշվետու ժամանակահատվածում Կարմիր Խաչի հետ համագործակցության շրջանակում սոցիալական աշխատողը գրանցել է երկու տարեց շահառուների, ովքեր կստանան աջակցություն՝ սննդի և հիգիենայի փաթեթների տեսքով:

Բուժքույրերի կողմից կազմակերպվել է բժշկի կոնսուլտացիա, լաբորատոր հետազոտություններ, սրտաբանի, գինեկոլոգի, ԼՕՌ բժշկի կոնսուլտացիա, անալիզների ընդունում, ինչպես նաև միջմկանային ներարկումներ և ներերակային ներարկումներ բժշկի ցուցումով: Բուժքույրերը նաև կազմակերպել են արյան լաբորատոր հետազոտություն տնային պայմաններում բժշկի նշանակումով:

Հաշվետու ժամանակահատվածում բուժքույրերը ծրագրի հինգ տարեցի ուղեկցել են ակնաբույժի խորհրդատվության և հետազոտության: Երկու տարեցի նշանակվել է դեղորայք: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է երկու տարեցի աչքի վիրահատություն:

Հաշվետու ժամանակահատվածում բուժքույրը, համագործակցելով սոցիալական աշխատողի հետ, կազմակերպել և իրականացրել է հինգ տարեց շահառուների

ուղեկցումը բժշկական հաստատություններ ախտորոշիչ հետազոտությունների և մասնագիտական խորհրդատվությունների նպատակով: Շահառուների համար իրականացվել են լաբորատոր հետազոտություններ, գաստրոսկոպիա, ինչպես նաև սրտաբանի, նյարդաբանի, օրթոպեդ-վնասվածքաբանի, քիթ-կոկորդ-ականջաբանի, տեղամասային բժշկի և ուռուցքաբանի մասնագիտական խորհրդատվություններ: Բժիշկների նշանակումների հիման վրա շահառուներին նշանակվել են համապատասխան դեղորայքային բուժում և միջմկանային ներարկումների կուրսեր, որոնք բուժքրոջ կողմից իրականացվել են տնային պայմաններում՝ ապահովելով բուժման շարունակականությունն ու հասանելիությունը:

Թերապևտի ցուցումով մեկ շահառուի նշանակվել է մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (ՄՌՏ), որի կազմակերպման նպատակով տարեցին բուժքույրը ուղեկցել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն: Բացի այդ, երկու տարեց շահառուների համար կազմակերպվել և իրականացվել է աուդիոմետրիկ հետազոտություն:

Հաշվետու ժամանակահատվածում բուժքրոջ և սոցիալական աշխատողի կողմից կազմակերպվել և ապահովվել է մեկ տարեց շահառուի բժշկական կենտրոն ուղեկցումը՝ վերին կոպի նորագոյացության հեռացման և ստորին կոպի ռետրակցիայի շտկման վիրահատության իրականացման նպատակով: Մասնագիտական թիմն իրականացրել է բուժական գործընթացի կազմակերպմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքները՝ ապահովելով շահառուի բժշկական հաստատություն տեղափոխումը, համապատասխան բուժհաստատության հետ համագործակցությունը և վիրահատության կազմակերպչական գործընթացների համակարգումը: Հետվիրահատական շրջանում բուժքույրը կազմակերպել և իրականացրել է տնային այցեր, կատարել նշանակված ներարկումները, հետևել վիրահատական վերքի խնամքին և վերահսկել շահառուի վերականգնման ընթացքը՝ ապահովելով բուժման արդյունավետությունն ու բարդությունների կանխարգելումը:

Սոցիալական աշխատողը բուժքրոջ հետ կազմակերպել են մեկ տարեց անձի ստացիոնար բուժումը Արմավիրի ԲԿ թերապևտիկ բաժանմունքում: Արմավիրի ԲԿ-ում տարեց անձի սննդի ապահովման հարցը կազմակերպվել է բուժքրոջ և սոցիալական աշխատողի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում բուժքույրը, սերտ համագործակցելով սոցիալական սպասարկողի հետ, կազմակերպել և իրականացրել է մեկ տարեց

շահառուի ուղեկցումը մասնագիտացված բուժհաստատություն՝ կոնքազդրային հոդի վիրահատական բուժում ստանալու նպատակով:

Բուժքույրը նախապես իրականացրել է պետպատվերի շրջանակներում բուժման կազմակերպման համար անհրաժեշտ ամբողջ փաստաթղթային գործընթացը՝ հավաքագրելով, լրացնելով և համապատասխան բուժհաստատություններին ներկայացնելով անհրաժեշտ բժշկական փաստաթղթերը, համակարգելով շահառուի հետազոտությունների, խորհրդատվությունների և հոսպիտալացման գործընթացները: Իրականացված աշխատանքների արդյունքում շահառուն ընդգրկվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծրագրում: Այնուհետև բուժքույրը սոցիալական սպասարկողի հետ համատեղ կազմակերպել է շահառուի ուղեկցումը «Նորք-Մարաշ» վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն, որտեղ պետպատվերի շրջանակներում հաջողությամբ իրականացվել է կոնքազդրային հոդի էնդոպրոթեզավորման վիրահատություն: Հետվիրահատական շրջանում բուժքույրը շարունակել է շահառուի առողջական վիճակի մշտադիտարկումը, ապահովել բժշկի նշանակումների կատարումը, տրամադրել անհրաժեշտ բուժքույրական խնամք և խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում, հաշվի առնելով շահառուի առողջական վիճակի շարունակական վատթարացումը և խնամքի կարիքների զգալի աճը, իրականացվել է համալիր մասնագիտական աշխատանք՝ տարեցին շուրջօրյա խնամքի կենտրոն տեղափոխելու նպատակով: Սոցիալական աշխատողը սերտ համագործակցելով Արմավիրի ՄԾ-ի հետ, արտահերթ կարգով նախաձեռնել և կազմակերպել է տարեցի՝ շուրջօրյա խնամքի հաստատություն ընդունվելու ամբողջ գործընթացը: Իրականացվել է անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումը, ձևակերպումը և համապատասխան մարմիններին ներկայացումը, ապահովվել է տարեցի գործի ամբողջական վարումը և տեղափոխման կազմակերպչական աշխատանքների համակարգումը: Արդյունքում տարեցը տեղափոխվել է Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն՝ ապահովելով նրա խնամքի շարունակականությունն ու անվտանգությունը:

Ծրագրի շրջանակներում բուժքույրերը շարունակում են տեղամասային պոլիկլինիկայից անվճար ստանալ համապատասխան դեղորայք:

Կենցաղային աշխատողները իրականացնում են շահառուի անհատական պլանով նախատեսված այցելություններ, կատարում են կենցաղային սպասարկում՝ տան մաքրություն, գնումներ, սննդի պատրաստում, զբոսանք, լոգանք և այլ գործողություններ՝ անհատական կարիքներին համապատասխան:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Ամսական 48 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ծառայությունների մատուցում,
- Սոցիալական ծառայության տրամադրում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են որոշակի խոչընդոտներ, որոնք հիմնականում կապված են անկանխիկ բանկային քարտերի ստացման գործընթացի հետ: Մասնավորապես, դժվարություններ են առաջացել բանկ այցելությունների կազմակերպման ընթացքում այն շահառուների համար, ովքեր ունեն հաշմանդամություն կամ հենաշարժողական խնդիրներ:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Շահառուների ցուցակը կցված է հաշվետվությանը:

- Ծառայությունների մատուցում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց,
- Նոր շահառուների դեպքում՝ կարիքների գնահատում, անհատական սոցիալական ծրագրի կազմում, պայմանագրերի կնքում:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Ծրագրի շրջանակում համագործակցում ենք հովանավորների հետ, ովքեր մեր տարեցներին ծննդյան օրերին նվիրում են անվճար տորթեր, կտրում ու խնամում նրանց մազերը: Ունենք նաև հովանավորներ, ովքեր նվիրում են գեղեցիկ ծաղիկներ և հագուստ:

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2026.07.06 17:12:40 AMT